դասպետ Նալեան, որք եւ ճանապարհ արարին 'ի ծովու։ Գրեաց նաեւ Գրիգոր Պատրիարք բազում աղաչանօք եւ արտասուօք առ Յովհաննէս վարդապետ եւ առ դլխաւորս ազգին՝ միաբանիլ ընդդէմ թշնամւոյ և վաստակիլ 'ի սէր Ս. Յակոբայ և 'ի փառս ազգին. չխնայել յինչս և յաշխատութիւնս, և մի երբէք վարանիլ վասն ծախուց, զի յամենայնի պատրաստ էր հոգալ զայն, զի պատրաստ եմ ասէր, վերստին արկանել զշղթայն 'ի պարանոց իմ 'ի վճարումն պարտուց. թէպէտ կամէր ինքն դնալ 'ի Կոստանդինուպոլիս, այլ Յակոբ վարդապետ և այլք արգիլին զնա, զի մի վնաս ինչ պատահեսցի 'ի բացակայութեան նորին (1735. 'ի 15 Յունվար ամսոյ)։

Իսկ Մէլէթիոս Յոյն Պատրիարքն Երուսաղէմի նախ քան զմեկնիլ 'ի Ս. Քաղաքէն՝ երդուաւ 'ի վերայ Աւետարանին Սրբոյ ընդ Գրիգոր Պատրիարքին Հայոց, և այնպէս դնաց 'ի Կոստանդինուպոլիս. և իբրեւ դէպ եղեւ ժողովիլ 'ի մի վայր ընդ Յովհաննու Պատրիարքին եւ երեւելի իշխանաւորաց երկաքանչիւր ազգաց, յետ երկար խօսելոյ եւ վիճելոյ 'ի վերայ խնդրոյն Երուսաղէմի, կամեցաւ խաբել զՅովհաննէս Պատրիարք և զորս ընդ նմա, որպէս խափեալ էր զԳրիգոր, տայ նոցա զայս կնքեալ և ստորագրեալ զիր յանդգնութիւն. եւ ինքն դրժեալ երդման իւրոյ, զհետ եղեւ յարուցանել զմեծամեծ խռովութիւնս որպէս ունիմք տեսանել յետոյ։ Ահաւասիկ թարգմանութիւն նամակի նորին։

Որովհետեւ թշնամին արդարութեան և խաղաղութեան ոչ երբէք դադարի արկանել խռովութիւն 'ի մէջ քրիստոնէից, ուստի պարտ է 'ի միտ առնուլ աշակերտացն Քրիստոսի թէ այսպիսի գրգռութիւնք 'ի սատանայէ են։ Եւ ըստ Աւետարանին Սրբոյ հեռի լինել յայնպիսեաց եւ հետեւիլ պատուիրանաց Տեառն մերոյ. զի ըստ որում թելադրութեամբ սատանայի յարուցին ոմանք վէճս եւ հակառակութիւնս 'ի մէջ բարեկամութեան Յունաց եւ Հայոց յԵրուսաղէմ յաղագս թափօրի և հանդիսի Լուսաւորութեան, որ կատարի յաւուր երեկոյի Շաբաթու Ճրագալուցի։ Մէլէթիոս Պատրիարքս Յունաց և Գրիգոր վարդապետն Հայոց, սակս չտալոյ տեղի անկարգութեանց և